

## <<Իմ սիրտը լեցուն է մարդկանց և երաժշտության հանդեպ սիրով>>



Սփյուռքահայ երգչուհի Սիֆիրի հոգու խորքից բխող երգարվեստը, հոգեթով ձայնն ունկնդրելով, հասկանում ես, թե ինչպես է նրա կատարումը հնչել թուրքական պետական հեռուստաալիքով: Նա առաջինն է, ում հաջողվել է հայկական երգ կատարելով, Թուրքիայում երգիչների լավագույն տասնյակում տեղ զբաղեցնել: Ավելին, թուրք երաժշտական քննադատներն անգամ առաջարկել են

որպես Թուրքիայի ներկայացուցիչ նրան ուղարկել Եվրատեսիլ:

Երկու տարվա ընդմիջումով թողարկված «Սիֆիր» և «Մեր» երաժշտական երկու ալբոմներն էլ թուրքական պետական հեռուստաընկերությամբ ցուցադրվել և տարվա լավագույն ալբոմների շարքին են դասվել: Հայերեն երգերով նրա ալբոմների մասին գրել են թուրքական ամենակարգացվող թերթերը, իսկ թուրք երկրպագուները նրան քաջալերող նամակներ են ուղարկում: Այս ամենը երգչուհին հրաշքի է նմանեցնում և համարում է, որ երաժշտության մեջ կա միայն սիրո կամուրջ.<<Ես իմ երգերի միջոցով ցանկանում եմ սեր և համերաշխություն տարածել...>>:

Իրականում աստվածատուր ձայնով այս երգչուհին մասնագիտական երաժշտական կրթություն չի ստացել, նրա համար որպես երգարվեստի դպրոց է ծառայել եկեղեցական երգչախմբում երգելը, որտեղ ժամանակին երգել է նաև նրա հայրը: Արհեստավարժ երգիչ դառնալու ցանկություն Սիֆիրը չի ունեցել: Նա համարում է, որ հայերեն երգելով Թուրքիայում հաջողությունների հասնելը շատ դժվար է: Զարմանում ես, այս քնքուշ ու մեղմիկ հայուհին ինչպես է կարողացել չգայթակղվել մեծ հանրաճանաչություն խոստացող թուրքերեն երգելու հորդորներով և հաստատակամորեն հայերեն օտարության մեջ պահպանելու և բարձր մակարդակով ներկայացնելու դժվարին գործին լծվել: «Իմ փափագը հայկական երգով ելույթ ունենալն ու Թուրքիայում հայերեն երգելն էր», -ասել է Սիֆիրը, ով հայերենով երաժշտական ալբոմ թողարկելու մեծ երազանք ուներ նաև: Եվ արդեն իսկ 2010-ին նա Թուրքիայում կարողացավ թողարկել իր առաջին՝ հայկական 12 երգով «Սիֆիր» երաժշտական ալբոմը, այդ թվում՝ թուրքահայ երգահան Մաժակ Թոշիկյանի «Անին տեսնեմ ու նոր մեռնեմ», «Տեր ողորմյա», «Կիլիկիա» երգերը: Սիֆիրը խոստովանում է, որ մեծ հույսեր չի կապել ալբոմի հետ, իր շրջապատն էլ մինչ լույս տեսնելը չարդարացված էր համարում հայերեն ալբոմի վրա գումար ծախսելը: Մինչդեռ այն աննախադեպ մեծ հաջողություն ունեցավ և վերաթողարկվեց յոթ անգամ: Հատուկ ալբոմի համար չորս նոր երգ էր գրվել, որոնցից «Նամակը» տևական ժամանակ չէր իջնում «թոփ 10»-ի առաջին հորիզոնականներից: Սիֆիրը խոստովանում է, որ ինքն էլ «շվարել էր այդ հաջողությունից»:

Երգչուհին վերջերս Երևանում էր՝ թուրք և հայ երաժիշտների համատեղ «Ներդաշնակության մեղեդի» նախագծի նկարահանման աշխատանքներին և մի շարք միջոցառումների մասնակցելու նպատակով: Նա ուրախությամբ նշեց, որ արդեն մոռացել է իր այցելությունների հաշիվը, մինչդեռ Հայաստանում լինելն իր ոչ այնքան

վաղ երազանքներից էր: Առաջին անգամ Հայաստան է այցելել որպես զբոսաշրջիկ 2001-ին: «Ասես երեկ էր. այնքան երջանիկ էի, այնքան հպարտ... Այդ ժամանակներից շատ բան է փոխվել: Երևանը շատ ավելի է գեղեցկացել, ճանապարհները բարեկարգ են դարձել, և շատ լավ է, որ այն ժամանակ ինձ մեծ ցավ պատճառած մուրացկանությունն է վերացել»:

Հայրական կողմը պոլսահայեր են, մայրական կողմից տատը Թոքաթից է, իսկ պապը՝ Սվազից: Սիբիրը միայն իր մայրական տատին է տեսել: Նրա գերդաստանից միայն ինքը և իրենից մեկ տարով մեծ քույրն են փրկվել 1915-ի եղեռնից: Նրանց ցավն այնքան մեծ էր, որ այդ մասին երբեք չեն խոսել: Այդ դաժան անցյալի մասին երգչուհին իմացել է միայն տատիկի մահվանից հետո՝ նրա քրոջ դստեր պատմածից:

Սիբիրը Հայաստանի մասին լսել է, երբ շատ փոքր է եղել: Հիշում է իր ընտանիքի անսահման ուրախությունը, երբ Հայաստանի մի քանի հեռուստաալիքներ դիտելու և լուրերին ու մշակութային կյանքին հետևելու հնարավորություն ունեցան:

Իսկ ահա հանձին երգչուհի Սիբիրի Հայաստանը, հայ ժողովուրդը գտավ իր զավակին, ստացավ հայրենական սիրո, կարոտի ու հավատի, վերածննդի գեղեցիկ ու քնքուշ հոգևոր ալիք:

«Անչափ շնորհակալ եմ, որ Հայաստանի ժողովուրդն ինձ մեծ սիրով ու հարազատորեն ընդունեց: Ես ինձ բախտավոր եմ զգում անձիս հանդեպ ժողովրդի ցուցաբերած վերաբերմունքի համար: Հենց առաջին իսկ օրից գնահատեցին, դու մեր Սիբիրն ես՝ ասացին: Առաջին հայտնությունս Համահայկական 5-րդ խաղերի բացման առիթով էր: Հետո հաճախացան այցերս: Յուրաքանչյուր այցելության նոր մարդկանց հետ ծանոթանալու առիթ եմ ունենում: Այսպես, Համահայկական 6-րդ խաղերի ժամանակ «The Beautified Project» խմբի ղեկավար Անդրե Միմոնյանի հետ ծանոթացա, այդպես ծնվեց «Ներդաշնակության մեղեդի» նախագիծը, և մենք դարձանք լավ բարեկամներ: Հարազատի նման բարեկամներ ձեռք բերեցի այստեղ: Ես էլ ուժերիս ներածի չափով փորձում եմ այդ մեծ սիրուն արժանի լինել: Միշտ ասում եմ և պիտի ասեմ՝ Հայաստանն իմ երկրորդ տունն է, երբ որևէ ծրագրի առաջարկ, հրավեր ստանամ, քայլելով չե, վազելով եմ գալու»:

Ներկայում Սիբիրն աշխատում է նոր ստեղծագործությունների վրա, ունի նոր առաջարկներ, բայց նախընտրում է դրանց մասին խոսել միայն պատրաստ լինելու դեպքում:

Սիրո մասին այդքան գեղեցիկ երգող Սիբիրի սիրտը դեռևս որևէ մեկը չի կարողացել գերել: Գարնան իր «կարմիր ծաղիկ մը» նվիրողին նա դեռևս չի գտել: Բայց իր սիրտը լեցուն է սիրով մարդկանց և երաժշտության հանդեպ:

*Ռուզան Անտոնյան  
23.04.2016*